

Լրատու

Լոյս կը տեսնէ 2006 թ. Սեպտեմբերին

Թիւ 10

Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

ՀՈԿՏԵՍԲԵՐ 2013

Սիրելի հայրենակիցներ,

Շուրջ մեկ ամիս է արդէն, որ դպրոցները բացած են ի-
րենց դռները, իիւրընկալելով մեր երեխաները. վերամու-
տի գեղեցիկ մթնոլորտ կը տիրէ ամենուրեք: «Լրատու»ն,
ըստ վերջին եօթը տարիներու աւանդութեան, այս թիւով
մուտք կը գործէ իրաքանչիւր հայ ընտանիքէ ներս, բոլոր
հայ աշակերտներուն մաղթելով բարի վերամուտ եւ բարե-
յաջող ուսումնական տարի:

Սակայն, այս տարի Կիպրահայ գաղութի կեանքի իրա-
կանութեան մէջ, վերամուտին առիթով կար ուրիշ նորու-
թիւն մը: Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2013-ին, առաջին
անգամ ըլլալով իր դռները բացաւ «ՆԱՆՕՐ» Յայկական
Մանկական Կեդրոնը, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի շըր-
ջափակէն ներս, տաքուկ մթնոլորտի մէջ ընդունելով մեր
գաղութի նորածիններն ու փոքրիկները: Երիտասարդ
ծնողներուն դրսեւրած դրական արտայայտութիւնն ու
գոհունակութիւնը, ինչպէս նաև գաղութին ընկալունը այս
անիրաժեշտ կառոյցի ստեղծման առիթով զգալի է: Ուրախ
եմ յայտնելու, թէ այս ոչ հասութաբեր հաստատութիւնը,
յաջողութեամբ սկիզբ առաւ եւ օր ըստ օրէ ամուր իիմբե-
րով կը շարունակէ ծառայել իր ազնիւ նպատակին: «ՆԱ-
ՆՕՐ» Յայկական Մանկական Կեդրոնին մասին յաւելեալ
տեղեկութիւններով անդրադարձ կատարած ենք «Լրա-
տու»ի յաջորդող էջերուն մէջ:

Իսկ Նարեկ Վարժարաններու 2013-ի շրջանաւարտնե-
րը, ընկերակցութեամբ երկու ուսուցչուհիներու, Յուլիս

14–27 Յայաստան մեկնեցան Երկու շաբթուան համար: Անոնք Կիպրոս վերադարձան յիշատակելի տպաւորութիւններով: Այս մասին անդրադարձած ենք «Լրատու»ի թիւ 3-րդ էջով:

Գալով «ՆԱՆՈՐ» Մանկապատանեկան Պարախունքին, Շաբաթ, 5 Յոկտեմբերին, կանոնաւոր կերպով վերսկսան պարախունքին փորձերը, ղեկավարութեամբ հայրենի պարուսոյց Պրն. Պետրոս Ղարիպեանի, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահէն ներս:

Ինչպէս գիտէք, Երեսփոխանական Գրասենեակը իր տարեկան Կիպրոս–Յայաստան մշակութային յարաբերութեան ծիրէն ներս, Յայրենի «Ժողովրդական Երգիչ» նախագիծի ամենալաւագոյն Երգիչ-Երգչուիհները հրաւիրած է Կիպրոս, միայն մէկ ելոյթի համար, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 9 Նոյեմբեր 2013-ին, Ստրովլուսի Քաղաքապետարանի սրահին մէջ, Երեկոյեան ժամը 19:00-ին: Կոչ կ'ուղղենք գաղութի բոլոր անդամներուն եւ մեր հայրենակիցներուն, անվարանօրէն ներկայ գտնուելու այս իրայատուկ հայկական ժողովրդական Երգերու համերգին եւ իրենց ներկայութեամբ քաջալերելու հայ Երգը մաքուր պահող եւ տարածող արուեստագէտները: Մի կորսնցնեք այս բացառիկ առիթը. կը վստահեցնենք ծեզի, թէ պիտի ապրիք անզուգական Երեկոյ մը: Ներկայակուած պիտի գտնէք այս առիթով լոյս տեսած թերթիկը:

Նախօրօք շնորհակալութիւն հայ արուեստասէրներուն եւ փառք ու պատի հայ մշակոյթը վառ պահողներուն:

Վարդգէս Մահտեսեան

Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

«Լրատու»ի նախորդ թիւով, Կիպրոս ժամանակաւոր կամ մշտական բնակութիւն հաստատած մեր հայրենակիցներուն տեղեկացուցած էինք երկրէն ներս տիրող տղնտեսական ճգնաժամին պատճառով օրենքի սահմանափակումներուն մասին, ինչ կը վերաբերի աշխատանքի հրամաններուն եւ արտօնագիրներուն:

Կացութիւնը կը շարունակուի ու ալ աւելի կը խստանայ, հետեւաբար, կը թելադրենք մեր հայրենակիցներուն, որոնք աշխատանք չունին եւ վերջին տարիներուն անօրէն կը մնան Կիպրոս կամ քաղաքական ապաստանեալի կարգավիճակ ունին եւ մերժում ստացած են, պէտք եղած կարգադրութիւնները ընել հեռանալու երկրէն, ապագային անհաճոյ կացութիւններու դիմաց զգտնուելու համար: Իսկ անոնք, որոնք վերջերս մերժում ստացած են, հակառակ այն իրողութեան, որ իրենց երկարատեւ կեցութեան ընթացքին Կիպրոսի մէջ անօրէն չեն մնացած եւ ունին աշխատանքի հրաման, երեսփոխանական Գրասեննեակը փորձ մը եւս կը կատարէ դիմելու Ներքին Գործոց Նախարարութեան, վերատեսութեան ենթարկելու անոնց պարագան:

Նարեկ Հայկական Վարժարաններու 2013 տարեշրջանի շրջանաւարտներուն Հայաստան այց

Կիրակի, 14 Յուլիս 2013-ին, չորրորդ յաջորդական տարին ըլլալով, Նարեկ Հայկական Վարժարաններու շրջանաւարտները ընկերակցութեամբ երկու ուսուցչուիհիներու՝ Տիկին Անկելա Սավայի եւ Օրինորդ Նորա Նաճարեանի, երկու շաբթուան համար մեկնեցան Հայաստան: Ըստ աւան-

դուրեկան, այս շրջապտոյտը Պր. Մահտեսեանին նուէրն է շրջանաւարտներուն, որ կ'իրականանայ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան «Արի Տուն» ծրագիրի ծիրէն ներս:



Ինչպէս միշտ, այս տարուան խումբն ալ մեծ խանդավառութեամբ եւ յիշատակելի տպաւորութիւններով վերադարձ կիալոս: Ըստ ընկերակցող ուսուցչուի հիմներուն, որոնք Յայաստանէն վերադարձին հանդիպում մը ունեցան Պրն. Մահտեսեանին հետ իրենց երախտագիտութիւնը յայտնելու, կիոխանցեցին թէ «Արի Տուն» ծրագիրի յայտագիրը ճոխ եւ բժախնդրութեամբ պատրաստուած էր: Յիշենք, թէ ինչպէս անցեալ տարի, այս տարուան նասնակցողներն ալ, ընկերակցութեամբ հիլողնկալող ընտանիքի իրենց տարեկից բարեկամներուն, երկրորդ շաբաթը միասնաբար անցուցին Աղաւնաձորի ճամբարին մէջ:

«ՆԱՆՈՐ» Յայկական Մանկական Կեդրոն



Երկուշաբթի, 2 Սեպտեմբեր 2013-ին, առաւօտեան ժամը 7:00ին, առաջին անգամ ըլլալով, իր դրները բացաւ «ՆԱՆՈՐ» Յայկական Մանկական Կեդրոնը՝ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի շրջափակէն ներս:

Շուրջ տարի մը տեւած շինարարական, ներքին կահաւորման եւ վարչական աշխատանքները աւարտած ըլլալով, այս անհրաժեշտ հաստատութեան ստեղծումը, վերջապէս իրականութիւն դարձաւ Կիպրահայ գաղութի կեանքէն ներս: Զեռնտու դրութիւն մը թէ՝ ծնողներուն եւ թէ փոքրիկներուն համար, որ անկասկած պիտի նպաստէ նաեւ մեր գաղութի հայապահպաննան նպատակին:

Կեդրոնը կը գործէ առաւօտեան ժամը 7:00-էն մինչեւ եռեկոյեան ժամը 6:00-ը, հոգածութեան տակ ունենալով 4 ամսականէն մինչեւ 3 տարեկան երեխաներ: Առ այժմ, Կեդրոնը ունի 14 երեխաներ, մասնագիտացած 2 լիաժամ եւ 2 մասնաժամ ուսուցչուհիներով:



Ուրախութեամբ կը փոխանցենք, որ երիտասարդ ծնողներ, ականատես ըլլալով Մանկական Կեդրոնին իւրայատուկ հոգածութեան պայմաններուն եւ զերմ նթնողրտին, բարձր կը գնահատեն այս հայանպաստ նախաձեռնութիւնը. արդէն իսկ Կեդրոնը ունի նորածին երեխաներու սպասողական ցանկ մը:



«ՆԱՆՈՐ» Հայկական Մանկական Կեդրոնը ոչ հասութաբեր հաստատութիւն մըն է Եւ կը կառավարուի հինգ հոգինոց նշանակուած Վարչական Խորհուրդի մը կողմէ:

ՀՅ Ընդհանուր Դատախազութեան պատուիրակութեան այց

Չորեքշաբթի, 11 Սեպտեմբեր 2013-ին, Հայաստանի Հանրապետութեան Ընդհանուր Դատախազութեան Միջազգային Եւ Օրինական Հարցերու բաժանմունքէն պատվիրակութիւն մը, մէկ շաբթօւան համար այցելեց Կիպրոս, տեսակցութիւններ ունենալու Եւ առկախ մնացած հարցերը կարգաւորելու՝ Կիպրոսի Հանրապետութեան Տնտեսական Յանազարդութեան Քննութեան Գրասենեակին հետ:

Այս պատուիրակութեան Երեսփոխանական Գրասենեակը լրիւ աջակցութիւն ցուցաբերեց, զոհացում տալով անոնց կարիքներուն, յաջողութեամբ աւարտելու իրենց աշխատանքային այցը Կիպրոս: Պատուիրակութիւնը, Երեքշաբթի, 17 Սեպտեմբերի երեկոյեան, հիւրընկալուեցաւ Պետա-

կան Ներկայացուցիչին բնակարանը:

Կիպրահայ գաղութի վեամբէն

Կիրակի, 18 Օգոստոս 2013-ին, Պետական Ներկայացուցիչն ու տիկինը, ներկայ գտնուեցան ՀՅԴ Կիպրոսի Երիտասարդական Միութեան կազմակերպած 25-րդ բանակումին փակման առիթով կազմակերպուած հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Թրոտոսի Արենոյշներու բանակավայրին մէջ:

Ուրբաթ, 17 Սեպտեմբեր 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան ՏԻԿՕ կուսակցութեան նախագահ Մարիոս Կառոյեանի համակիրներու խմբակին կազմակերպած բաց գրոյցին, որ տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի «Եւթիւնեան» սրահին մէջ:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ձեռնարկներ



Չորեքշաբթի, 24 Յուլիս 2013-ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ Աշխատանքային Եւ Ընկերային Ապահովագրութեան նորանշանակ Նախարար Տիկին Զետա Եմիլիանիտուին հետ, Երկրին դիմագրաւած տնտեսական դժուարութիւններուն, ինչպէս նաև Կիպրահայ գաղութը յուզող կարգ մը հարցերուն առնչութեամբ։ Ան խոստացաւ իր կարելին ընել օգտակար հանդիսանալու Կիպրահայ գաղութին։

Կիրակի, 25 Սեպտեմբեր 2013-ին, Պրմ. Վարդգէս Մահտեսեան, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցաւ Աներկիայի Սիացեալ Նահանգներու Կիպրոս ժամանած Քարտինալ Գերաշնորի Մարզ Կարիքի ի պատիւ տրուած ընթրիքին, որ տեղի ունեցաւ Մարտնիքներու Արքեպիսկոպոսարանին մէջ, հովանաւորութեան Նորին Գերազանցութիւն Մարտնիթ Արքեպիսկոպոս Եռևէֆ Սուլէյֆի։

Ցաւակցագիր

Չորեքշաբթի, 18 Սեպտեմբեր 2013-ին, Պետական Ներկայացուցիչը նախկին «Արեւիկ», այժմ «Արեւներ» համոյթի Գեղարուեստական Ղեկավար Արմեն Տիւանեանի անակնկալ ու վաղաժամ մահուան տիսուր առիթով, ցաւակցագիր մը յղեց անոր տիկնոջ եւ հարազատներուն։

Շնորհաւորագիր


Չորեքշաբթի, 4 Սեպտեմբեր 2013-ին, Պրմ. Վարդգէս Մահտեսեան յատուկ նամակ մը յղեց ՀՀ Սփիլորի Նախարար Տիկին Յիանոյշ Յակոբեանին, շնորհաւորելով Սփիլորի Նախարարութեան հնգամեայ յորելեանը, մաղթելով նախարարութեան ու անձնակազմին ուժ եւ կորով, նոյն թափով շարունակելու եւ նորանոր ծրագիրներ կեանքի կոչելու՝ ամրապնդելու համար Յայրենք-Սփիլոք կապերը։

Յինգշաբթի, 5 Սեպտեմբեր 2013-ին, Պետական Ներկա-

յացուցիչը յատուկ գիրով մը, շնորհակալութիւն յայտնեց ՀՅԴ Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբի Գրասենեակին ուղարկած յատուկ հրաւերին համար՝ մասնակցելու Եւրոպահայութեան երրորդ համագումարին: Ան շնորհաւորեց Յանձնախումբին տարած անսակարկ աշխատանքը, որ անպայման ճամբայ պիտի բանայ մեր Սուլր Դատի արդար լուծման ու հատուցման, ինչպէս նաև Արցախի ժողովուրդին ազատ ինքնորոշման:

Շաբաթ, 21 Սեպտեմբեր 2013-ին, Պրմ. Վարդգէս Մահտեսեան անհատական շնորհաւորագիրներ յղեց Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ն.Վ. Սերժ Սարգսյանին, Սփիլուքի Նախարար Տիկին Հրամոյշ Յակոբեանին եւ Յունաստանի ու Կիպրոսի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Պրմ. Գագիկ Ղալաչեանին՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 22-րդ տարեդարձին առիթով, մաղթելով որ յաջորդող տարիները մեր Հայրենիքի, Լեռնային Ղարաբաղի եւ համայն հայութեան համար ըլլան անկիւնադարձային:

Երկուշաբթի, 23 Սեպտեմբեր 2013-ին, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորագիր մը յղեց Նարեկ Հայկական Վարժարաններու տնօրէնուհի Տիկին Վերա Թահմազեանին, «Մովսէս Խորենացի» շքանշանով պարգեւատրուելուն ուրախ առիթով, մաղթելով անոր արեւշատութիւն եւ յարատել վերելք:



«Ժողովրդական Երգիչ» Համոյք

Միայն մեկ ելոյթ

Չարաք 9 Նոյեմբեր 2013 ժամը 19.00
Ստրովոլոսի Քաղաքապետարանի Սրահ Նիկոսիա

Մասնակցութեամբ՝
Հայրենի ժողովրդական Երգիչ նախագիծի լաւագոյն երգիչներուն

Սեւակ Ամրոյեանի
Պետրոս Պետրոսեանի
Եւա Թաշճեանի
Լուսինէ Գասպարեանի
Սոմիքա Սազարեանի
Եւ
Նուազախումբին

Ինչպէս նաև
Համազգայինի «Սիփան» Պարախումբին

Տոմսի սակ €10.00
Տոմսեր ապահովելու համար հեռածայնել 22-454540

Երեսփոխանական Գրասենեակ

Թարմացնելու համար «Լրատու»ի հասցեացանկը, Կիպրահայ գաղութի անդամներէն եւ մեր հայրենակիցներէն կը խնդրուի կապ հաստատել Երեսփոխանական Գրասենեակին հետ հեռաձայնելով 22454540 թիւին, ճշդելու համար բնակարաններու հասցեները եւ կամ տեղեակ պահելու այլ փոփոխութիւններու մասին:

Ընորհակալութիւն

«Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան Օրէնքներուն» բաժինը լոյս պիտի տեսնէ «Լրատու»ի յաջորդ թիւով:

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Զաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42

Ել. Հասցե office@armenianmp.com

Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42

Ել. Հասցե vmahdessian@parliament.cy